ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1087-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԱԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Արշակունի Գևորգի Հովհաննիսյանի (ծնված՝ 21.01.1950թ.) դիմումը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Ձորագյուղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1991թ-ի թիվ 01 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության վկայագիրը՝ գրանցամատյան՝ 211/24, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնք, գյուղ Ձորագյուղ, 4-րդ փողոց, 7/1 բնակելի տուն հասցեում գտնվող 06-066-0015-0038 կադաստրային ծածկագրով 0,20403 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Արշակունի Գևորգի Հովհաննիսյանի (ծնված՝ 21.01.1950թ.) սեփականության իրավունքը 06-066-0015-0038 կադաստրային ծածկագրով 0,20403 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա գտնվող՝ մինչև 2001թ-ը կառուցված 261,6 ք/մ ընդհանուր մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ:

3.Հողամասի վրա առկա է 2007 և 2015 թ-ին ինքնակամ կառուցված 175,9 ք/մ ընդհանուր մակերեսով անասնաշենք, որի օրինականացումը կկատարվի հետագայում օրենքով սահմանված կարգով:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 սեպտեմբերի 2024
գ. Փամբակ